



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

«10» մայիսի 2019 թվականի N:188-Վք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N31 ՀԻՄՆԱԿԱՆ  
ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ  
ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 66-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին  
կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ենթակետի, «Պետական ոչ  
առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված  
«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական  
հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի  
կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և  
գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված  
«Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական  
հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման  
մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի, 7-րդ, 9-րդ,  
13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի  
Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Գր. Լուսավորչի անվան N31 հիմնական

դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի 2019 թվականի ապրիլի 18 թիվ 6 արձանագրությունը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Գր. Լուսավորչի անվան N31 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Խաչատուր Խնձրցյանի, Խաչատուր Ժամակոչյանի, մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Սուսաննա Խաչատրյանի և Քրիստինա Գրիգորյանի լիազորությունները և նրանց փոխարեն Խորհրդի կազմում երեք տարի ժամկետով համապատասխանաբար հաստատել Տիգրան Մինասյանին, Սամվել Մարտիրոսյանին, Քնարիկ Մխիթարյանին և Մարինե Խաչատրյանին:

2. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Գր. Լուսավորչի անվան N31 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 66-Ա որոշման հավելվածում «Խնձրցյան Խաչատուր», «Ժամակոչյան Խաչատուր», «Խաչատրյան Սուսաննա» և «Գրիգորյան Քրիստինա» բառերը համապատասխանաբար փոխարինել «Մինասյան Տիգրան», «Մարտիրոսյան Սամվել», «Մխիթարյան Քնարիկ» և «Խաչատրյան Մարինե» բառերով:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

